

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 07**

ք. Երևան

«19» «հունվարի» 2018թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Վ.Ստեփանյանի (այսուհետ՝ Աշխատակազմ), որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. մայիսի 2-ի N 726-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մինասյանի (այսուհետ՝ Ստացող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 03 խմբի 03 դասի «02. Հանրային իրազեկման ապահովում» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

### **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Սույն պայմանագրով Աշխատակազմը պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ է հատկացնում Ստացողին՝ վերջինիս կանոնադրական խնդիրները իրականացնելու համար, իսկ Ստացողը պարտավորվում է ֆինանսական միջոցներն օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնավորապես.

- կատարել ուսումնասիրություններ հանրային կապերի, պետական կառույցների թափանցիկության, տեղեկատվության մատչելիության, տեղեկատվության հավաքման և տարածման գործընթացների վերաբերյալ.
- իրականացնել զանգվածային լրատվության միջոցների ընդհանուր և թեմատիկ դիտարկում և վերլուծություն, ուսումնասիրություններ և դիտարկումներ կատարել զանգվածային լրատվամիջոցների շուկայի վերաբերյալ.
- ուսումնասիրել հանրային կապերի և տեղեկատվության ոլորտում միջազգային փորձը և հանդես գալ նախաձեռնություններով՝ առաջարկություններ անել զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարելավման ուղղությամբ և այլն:

### **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **2. Աշխատակազմը պարտավոր է՝**

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Հանրային իրազեկման ապահովում» ծրագրով նախատեսված դրամաշնորհների հաշվին:

2.1.2 Ստացողին փոխանցել սահմանված կարգով հաստատված նախահաշվային փաստաթղթերը:

2.1.3 Պարբերաբար վերլուծել Ստացողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

## **2.2. Աշխատակազմը իրավունք ունի՝**

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Ստացողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Ստացողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Ստացողի հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.4.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

## **2.3. Ստացողը պարտավոր է՝**

2.3.1. Ամսական կտրվածքով Աշխատակազմին ներկայացնել իր կատարած ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

2.3.2. Աշխատակազմի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.3.3. Ստացողը աշխատանքների կատարման մասին հաշվետվությունները ներկայացնում է Աշխատակազմին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թ. ապրիլի 1-ի N 176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. փետրվարի 4-ի N 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի N 324-Ն հրամանների ձևերի համապատասխան:

## **2.4. Ստացողը իրավունք ունի՝**

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Աշխատակազմին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ**

3.1. Պայմանագրի 1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Աշխատակազմը Ստացողին հատկացնում է տարվա կտրվածքով 581 440 300 (հինգ հարյուր ութսունմեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

3.2. Պայմանագրի 3.1-ին ենթակետում նշված գումարը Ստացողին է փոխանցվում «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 28.12.2017թ. N 1717-Ն որոշման համաձայն՝ ամսական կտրվածքով:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

#### 5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

#### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

#### 8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝	ՍՏԱՅՈՂ՝
<p>«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ</p> <p>Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ կառավարական N 1 շենք Բանկ՝ ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554</p> <p>Աշխատակազմի ղեկավար  Վ. Սարգսյան</p> <p>Կ.Տ.</p>	<p>«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ</p> <p>Հասցե՝ ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 26,2-րդ մ/շ Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Հ/Հ 220009190160000 ՀՎՀՀ 00257466</p> <p>Տնօրենի ժ.պ.  Ա. Մինասյան</p> <p>Կ. Տ.</p>

